ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «07» նոյեմբերի, 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 50-Ա/Ք

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N1122 որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ ԿԳ նախարարի 2017թ. դեկտեմբերի 25-ի N1514-Ա/2 հրամանի 4-րդ կետը, ՀՀ ԿԳ նախարարի 2018թ. մարտի 21-ի N247-Ա/2 հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհուրդների կողմից հաստատված վարկանիշային ցանկերը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված գիտական թեմաների ցանկն ըստ «Բնական գիտություններ», «Ճարտարագիտություն և տեխնոլոգիաներ», «Բժշկական գիտություններ», «Գյուղատնտեսական գիտություններ», «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն ու հումանիտար գիտություններ» բնագավառների՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Ռուզան Ասատրյան)՝
   1) կազմակերպել մրցույթի բողոքարկման արդյունքների իրազեկման աշխատանքները,
   2) կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը:

3. ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝ գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2018 թ. նոյեմբերի 1-ից:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ